

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ՀԿՍ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ 2

ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ 4

ՀԿՍ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ 5

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՅԱՆԿ 5

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

**ՀԿՍ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ
ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 7**

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ 8

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ 21

**ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՏԵՅՄԱՆ 27**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 30

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 32**

Հաշվետու ժամանակաշրջանը հատկապես նշանակալից էր Հայաստանյան Կլոր սեղան (ՀԿՍ) հիմնադրամի համար, քանի որ մենք հասանք մեր եռամյա ռազմավարական ծրագրի կեսին, երբ առավել տեսանելի պետք է դառնային մեր աշխատանքի առաջին շոշափելի արդյունքները: 2011-2012 թթ. ընթացքում մենք շարունակեցինք աշխատել համապարփակ համայնքային զարգացման, կարողությունների զարգացման և տարածաշրջանային խաղաղության ու հաշտեցման ոլորտներում և խորապես հավատում ենք, որ հատկապես այդ ոլորտների ընտրությունն է արտացոլում մեր հասարակության ու անդամ եկեղեցիների կարիքները և ՀԿՍ-ի առաքելությունը: Այս ընթացքում մենք էլ ավելի ամրապնդեցինք մեր համագործակցությունը եկեղեցական կառույցների, հասարակական կազմակերպությունների, Էկումենիկ գործակալությունների, բազմաթիվ համայնքների և աշխարհիկ դոնոր կազմակերպությունների հետ: Վերջիններիս հետ կապված ցանկալի է նշել մեր համագործակցությունը Միավորված Ազգերի կազմակերպության Բնակչության Հիմնադրամի (ՄԱԲՀ) հետ, որի համար մենք արդեն դարձել ենք ռազմավարական գործընկեր: Մենք զնահատում ենք ՄԱԲՀ-ի տարածաշրջանային և հայաստանյան գրասենյակների աջակցությունն ու համագործակցության արդյունքները: ՄԱԲՀ-ը հատուկ ուշադրություն է դարձրել ՀԿՍ-ի և Հայ եկեղեցու համատեղ ծրագրերին՝ գեներային բռնության, ընտանիքի բարեկեցության և դիակոնիկ կրթության ոլորտներում: Կարծում են, սա հաշվետու ժամանակաշրջանում եղած առավել ուշագրավ նոր համագործակցությունն է: Հարկ է նաև նշել ՀԿՍ-ի անդամակցությունը Եվրադիակոնիայի ֆեդերացիային, որով կապ է ստեղծվել Արևմտյան Եվրոպայի առաջատար դիակոնիկ կազմակերպությունների հետ: Այժմ մենք սովորելու և փորձի փոխանակման ավելի մեծ հնարավորություններ ունենք:

Կարողությունների զարգացման ոլորտում ևս մենք մեծ հաջողությամբ շարունակում ենք մեր համագործակցությունը եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի անդամների հետ: Մասնավորապես, որպես Այանսի զարգացման նախաձեռնության մի մաս, մենք մասնակցում ենք կարևոր քննարկումների և դասընթացների, իրականացնում ենք դեպքերի ուսումնասիրություններ, գործում Այանսի տարբեր խորհրդատվական և աշխատանքային խմբերում: Մեզ համար կարևոր է ուսումնասիրել Այանսի մյուս անդամների փորձը, որպեսզի կարողանանք զարգացնել ՀԿՍ-ի կարողություններն ու ապահովել զարգացմանն ուղղված աշխատանքների ու արտակարգ իրավիճակներում օգնության որակի չափանիշները:

2011 թ-ին ՀԿՍ-ը կարողացավ արագ և տեղին զեկուցել Տավուշի մարզում սողանքների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի մասին, որը խլեց հինգ մարդու կյանք և հասցրեց մեծ նյութական վնասներ: Շնորհիվ Այանսի Արագ Արձագանքման Հիմնադրամի, մենք առաջին կազմակերպությունն էինք, որն օգնեց վերացնելու արտակարգ իրավիճակը: Այս դեպքը մեզ օգնեց ավելի լավ հասկանալ, թե որքան օգտակար կարող են լինել հոգևորականները

արտակարգ իրավիճակում տուժածներին տեղում հոգևոր ու հոգեբանական աջակցություն ցուցաբերելու հարցում:

Խոսելով այս ժամանակահատվածի նոր ձեռքբերումների մասին, հարկ են համարում նշել եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի տեղական անդամների՝ ԱՄՔՈՐ-ի, ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպության և ՀԿՍ-ի՝ եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի հայաստանյան ֆորում հիմնելու համատեղ նախաձեռնության մասին: Այս ֆորումը Հայաստանում երեք եկեղեցական կառույցների ջանքերը միավորելու և զարգացման ոլորտում ու արտակարգ իրավիճակներում աշխատանքները համակարգելու եզակի փորձերից է:

Ուրախ են նշել նաև մեկ այլ սերտ համագործակցության մասին զարգացման ոլորտում աշխարհում գործող մեկ այլ կազմակերպության՝ Վորլդ Վիժնի հետ: Վորլդ Վիժնի հայաստանյան մասնաճյուղի, որը երկրում գործող խոշորագույն միջազգային կազմակերպություններից է, մեր գործընկերները միշտ պատրաստակամությամբ համագործակցում են ՀԿՍ-ի հետ տարբեր բնագավառներում եկեղեցու հետ իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Այս համառոտ նախաբանում կցանկանայի երկու խոսքով ներկայացնել տեղեկություն ՀԿՍ-ի ծրագրերի, նոր միտումների, մոտեցումների, գործընկերների ու շահառուների նոր խմբերի մասին: Զարգացման ծրագրերի հիմնախնդիրներից է այն, որ դրանք հազվադեպ են նախագծվում այնպես, որ ներառեն առավել աղքատ խավերին: Հայտնի փաստ է, որ սովորաբար ամենաաղքատները համայնքի ակտիվ մասը չեն կազմում: Այդուհանդերձ, մենք, որպես եկեղեցական կառույց, պետք է գտնենք ուղիներ այդ մարդկանց հասնելու և ակտիվորեն ներգրավելու համայնքի կյանքում: Եթե հաշվի առնենք, որ Հայաստանում բնակչության աղքատության մակարդակը 35%-ից բարձր է, իսկ 120 000 մարդ գտնվում է աղքատության ամենաստորին սահմանագծին՝ այսինքն, ըստ 2011թ-ի Հայաստանի վիճակագրական տարեգրքի, ամենաաղքատ բնակչությունն ապրում է օրական 1,5 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով, մենք պետք է մեծ ջանքեր գործադրենք նրանց ներգրավելու մեր ծրագրերում: Սա ակնհայտորեն պետք է լինի եկեղեցական կառույցների առաջնահերթություններից մեկը: Մյուս կողմից, մարտահրավեր է նաև այն, թե ինչպես կարելի է մեր ծայրաստիճան բևեռացված հասարակության հարուստ և աղքատ մասերը կապել իրար:

Այսպիսով, ՀԿՍ-ը Վորլդ Վիժնի և ՀԱԵ Արագածոտնի թեմի հետ միասին, նախաձեռնեց մի ծրագիր, ըստ որի եկեղեցին ու տեղական բիզնեսը օգնություն կկարողանան տրամադրել համայնքի առավել խոցելի մասին: Աստիճանաբար համայնքի այդ երկու խմբերի ներկայացուցիչները կկարողանան միասին աշխատել և լուծել սոցիալական խնդիրներ, իսկ եկեղեցին կդառնա նրանց կապող օղակը: Ընդհանուր առմամբ, հաշվի

առնելով Եկեղեցու բարձր հեղինակությունն ու նրա նկատմամբ վստահության մակարդակը, կարծում են, մենք պետք է հնարավորինս օգտագործենք նրա ուժը՝ լուծելու և հարթեցնելու սոցիալական բախումները:

Երկրորդ ծրագիրը, որը կուզենայի նշել, ևորարարական մոտեցում է, որը վերաբերում է օգնության արդյունավետության գլոբալ խնդրին: Ինչպես գիտենք, այսօր ԵՄ-ը խոշորագույն դոնոր է և Հայաստանում զարգացման ծրագրերը հովանավորում է համագործակցելով զանազան պետական կառույցների հետ: Որևէ ԲՀԿ-ի ներգրավվածություն ծրագրերի նախագծման, իրականացման և սպասարկան գործընթացներին նվազագույն է: Անցյալում որոշ տեղական ՀԿ-ներ փորձեր են արել դրանք վերահսկել և զեկուցել իրենց տարաշաժրջաններում իրականացվող ծրագրերի մասին, սակայն դրանք եղել են առանց լուրջ համակարգման անջատ փորձեր: Այդ ՀԿ-ները, որպես կանոն, ծանոթ չեն եղել նման ծրագրերի վերահսկման գոյություն ունեցող մեթոդներին և հայ հասարակությանը ամփոփ զեկույցներ չեն ներկայացրել: Իսկ շատ կարևոր է, որ հաճախ քննարկումների և հանդիպումների ժամանակ երկրնտրանքի առաջ ենք կանգնում, թե որն է քաղաքացիական հասարակության դերը. ձևում գործադրել իշխանությունների վրա, հանդես գալ որպես անհանդուրժող քննադատ, թե լինել գործընկեր ու օգնական: Եթե ԲՀԿ-ները պատրաստվում են քննադատել իշխանություններին, ապա ինչ ձևով: Ես կփորձեմ շատ համառոտ ձևակերպել մեր մոտեցումը. ոմանք ձևման կողմակից են, մենք՝ երկխոսության: Այս մոտեցումով էլ մենք Հայաստանի երեք մարզերում ծրագիր ենք սկսել՝ ՀԿ-ներին կազմակերպելու և ուսուցանելու, թե ինչպես վերահսկել իրենց տարաժաշրջաններում իրականացվող ԵՄ-ի մեծածավալ զարգացման ծրագրերը, և ինչպես ՀԿ-ների և տեղական ու կենտրոնական իշխանությունների միջև երկխոսության միջոցով փոխանակել, թե ինչն է լավ, ինչը կարելի է բարելավել և որոնք են քաղաք դասերը:

2011 թ.-ի տարեկան հաշվետվության այս նախաբանի վերջում իմ գործընկերների և իմ անունից կցանկանայի անկեղծ գնահատանքի ու երախտագիտության խոսքեր ուղղել Հայ Առաքելական Եկեղեցուն և Ն.Ս.Օ.Տ.Տ.

Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Բոլորս գիտենք, որ Հայ Առաքելական Եկեղեցին և Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը ՀԿՍ-ի նախաձեռնողներն ու հիմնադիրներն են:

Այս տարիների ընթացքում Հայ Եկեղեցին և Վեհափառ Հայրապետն անձամբ մշտապես աջակցել են ՀԿՍ-ին և խրախուսել խորացնելու ներգրավվածությունը տարբեր սոցիալական և դիակոնիկ ծրագրերում ու խնդիրներում, որոնց նպատակն է օգնել Հայաստանի ժողովրդին: Հաճախ այս աշխատանքն առանց մեր Կաթողիկոսի բարոյական և հոգևոր աջակցության անհնար կլիներ, քանի որ այնքան էլ հեշտ չէ գործել հակասական ու դժվարին այնպիսի խնդիրների ոլորտներում, ինչպիսիք են տարածաշրջանային խաղաղությունն ու արդարությունը, հասարակության բևեռացումն ու ծայրահեղ աղքատությունը, ընտանեկան արժեքների սերմանումն ու ներընտանեկան բռնության վերացումը: Սրանցից շատերը իրար կապակցված խնդիրներ են՝ կարևոր հայ հասարակության համար և վերաբերում են շատերին:

Կուզենայի ընդգծել նաև ՀԿՍ Էկումենիկ հոգաբարձուների խորհրդի կարևոր դերը. այն ուղղակիորեն ներգրավված է ոչ միայն մեր ծրագրերի ռազմավարական գործընթացներին, այլ երբեմն նաև ՀԿՍ-ի ամենօրյա գործունեության մեջ: ՀԿՍ-ի աշխատակիցների անունից շնորհակալություն են հայտնում նրանց համերաշխ աշխատանքի, ՀԿՍ-ի ռազմավարության, ծրագրերի ընտրության և աշխատանքի ընթացքում ծագող խնդիրների լուծմանն աջակցելու համար:

Ցանկանում ենք նաև մեր երախտագիտությունն ու գնահատանքը հայտնել Էկումենիկ գործակալություններին երկարատև և արդյունավետ համագործակցության համար: Առանց գերմանական, ևորվեգական, շվեյցարական և այլ կազմակերպությունների բազմակողմանի աջակցության մեր աշխատանքը հնարավոր չէր լինի իրականացնել:

4. Նազարյան

Տեղական գործընկերներ

Եկեղեցիներ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի	Հայ Ավետարանական Եկեղեցի	Հայ Կաթոլիկ Եկեղեցի	ՀԱԵ Արագածոտնի թեմ
ՀԱԵ Արարատյան Հայրապետական թեմ	ՀԱԵ Արմավիրի թեմ	ՀԱԵ Գեղարքունյաց թեմ	ՀԱԵ Գուգարաց թեմ
ՀԱԵ Կոտայքի թեմ	ՀԱԵ Շիրակի թեմ	ՀԱԵ Տավուշի թեմ	ՀԱԵ Վայոց Ձորի թեմ
ՀԱԵ Գևորգյան համալսարան	ՀԱԵ Վազգենյան դպրանոց	ՔԴԿ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն	

ՀԿ-ներ

«Արագած» սոց-բարեգործական երիտասարդական ՀԿ	«Զանգակատուն» ՀԿ	«ԷԿՈ 99» ՀԿ	«Թաթուլ Կրպեյան» ՀԿ
«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ	«Հայ Միասնության Խաչ» ՀԿ	«ՀՀ Դատավորների Միություն» ՀԿ	«ՇԷՆ» ԲՀԿ
«Վորլդ Վիժն Միջազգային»-ի հայաստանյան մասնաճյուղ			

Այլ գործընկերներ

«Շողակաթ» հեռուստաընկերություն	Արտակարգ իրավիճակների կառավարման պետական ակադեմիա
Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետ	Կրթության և գիտության նախարարություն
Մայքրոսոֆթ ընկերության հայաստանյան գրասենյակ	

Արտասահմանյան կազմակերպություններ

- Բողոքական բարեփոխումների օգնության հիմնադրամ, Շվեյցարիա (FAP)
- Դիակոնիկ ծառայություն/ Հաց աշխարհի համար, Գերմանիա (DW/ BftW)
- Եկեղեցական զարգացման ծառայություն, Գերմանիա (EED)
- Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ, Շվեյցարիա (WCC)
- Եկեղեցիների համատեղ գործողություններ այլսա, Շվեյցարիա (ACT Alliance)
- Կրոնների և բնապահպանության դաշինք, Անգլիա (ARC)
- Համագործակցության զարգացման միջեկեղեցական կազմակերպություն, Նիդերլանդներ (ICCO)
- Միավորված Ազգերի Կազմակերպության Բնակչության Հիմնադրամ (UNFPA)
- Նորվեգիական եկեղեցական օգնություն, Նորվեգիա (NCA / MFA)
- Շվեյցարական միջեկեղեցական օգնություն, Շվեյցարիա (HEKS/EPER)

Աուդիտոր

«ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

ՀԿՍ-Ի ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ

«Արևելք» հիմնադրամ

Արևելյան Եվրոպան ընդդեմ ՁԻԱՀ-ի ցանց

Բնակչության և զարգացման հարցերի շուրջ Եվրոպայի և Միջին Ասիայի կրոնական կազմակերպությունների և ՄԱԲՀ-ի համագործակցության ցանց

Եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանս

Եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի գործադիր կոմիտե

Եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի Կլիմայի փոփոխության շահերի պաշտպանության խորհրդատվական խումբ

Եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի հայաստանյան ֆորում

Եկեղեցիների Համատեղ Գործողություններ Այանսի սոցիալ-հոգեբանական աջակցության աշխատանքային խումբ

ԵՀԽ արտաքին գործերի հանձնաժողով

Եվրադիակոնիայի ֆեդերացիա

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԱԳ Արևելյան գործընկերություն

ՔՀԿ քաղաքացիական հասարակության կազմակերպություն

ԵՀՔ Եվրոպական հարևանության քաղաքականություն

ՄԱԲՀ Միավորված Ազգերի Կազմակերպության Բնակչության Հիմնադրամ

ՀԱԵ Հայ Առաքելական Եկեղեցի

ՀԱՎԵ Հայ Ավետարանական Եկեղեցի

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՀՀԶ Համապարփակ Համայնքային Զարգացում

ՏՏ տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՄԻԱՎ/ՁԻԱՀ Մարդու իմունային անբավարվածության վիրուս / Ձեռքբերովի իմունային անբավարվածության համախտանիշ

ՔՆԽ քաղաքացիական նախաձեռնության խումբ

ԵՀԽ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ

ԵՄ Եվրամիություն

ՀԿ Հասարակական Կազմակերպություն

ՀԿԵ Հայ Կաթոլիկ Եկեղեցի


ՀԿՍ Հայաստանյան Կլոր սեղան

ԼՂՀ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ՍՊԸ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՏՕ Տեղական օրակարգ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ







ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՈՒՄ

actalliance



ՀՀԶ-ի խնդիրը՝ Բարեկեցիկ դարձնել ավելի քան 20 համայնքներ՝ սոցիալական, տնտեսական, հոգևոր և բնապահպանական ոլորտներում:

Չափորոշիչներ

- 10 քաղաքացիական նախաձեռնության խմբեր որոշել են իրենց համայնքների կարիքների առաջնահերթությունը և մասնակցել են համայնքային միջոցների բաշխման տեղական իշխանությունների որոշումների ընդունմանը
- 10 կարիքավոր համայնքներ բարելավել և դիվերսիֆիկացրել են իրենց համայնքային եկամուտները,
- դասընթացներն ավարտողների մինչև 20%-ը (ավելի քան 400մարդ)կարող են ավելացնել իրենց եկամուտները և ներդրումներ անել համայնքերի սոցիալական ծրագրերին:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՈՒՄ

N	Ծրագրի համար	Ծրագրի անվանում	Իրականացնող կազմակերպություն	Իրականացման վայր	Տևողություն	Բյուջեն 2011թ.
1.	09-ICD3	ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցերեկային կենտրոնի հիմնում; Թրաֆիկինգի կանխարգելում և հովվական աջակցություն	Հայաստանյան Կլոր սեղան	Երևան և հարակից մարզեր	2009 մարտ - 2011 մայիս	9,003,323
	09-ICD3/1	ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցերեկային կենտրոնի հիմնում	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ	Երևան և հարակից մարզեր	2009 մարտ - 2011 մայիս	
2.	10-ICD3	ԿՍ շենքի կառուցում և կահավորում	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	Արմավիրի մարզ	2010 ապրիլից	11,165,354
3.	10-ICDm5	ԵՀՔ և ԱԳ քաղաքականության իրականացման մոնիթորինգ	Հայաստանյան Կլոր սեղան	Երևան	2010 մայիս - 2011 հունիս	10,575,134
4.	10-ICDs10	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ուսուցում	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	Արմավիրի մարզ	2010 հուլիս - 2011 մարտ	2,627,500
5.	11-ICD1	ՀՀ Լեռնային համայնքների կայուն զարգացում – տեղական օրակարգ 21	Հայաստանյան Կլոր սեղան	Գեղարքունիքի մարզ	2010 նոյեմբեր - 2011 նոյեմբեր	56,607,073
	11-ICD1/1	Լանջաղբյուր համայնքի խմելու ջրագծի կառուցում	ՀԱՆ Գեղարքունյաց թեմ	Գեղարքունիքի մարզ	2011 ապրիլի 15-30	
	11-ICD1/2	Կարմիր գյուղի մանկապարտեզի վերանորոգում	ՀԱՆ Գեղարքունյաց թեմ	Գեղարքունիքի մարզ	2011 ապրիլի 15-30	
	11-ICD1/3	Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն և Սենյոնովկա համայնքների ենթակառուցվածքների ծրագիր	ՀԱՆ Գեղարքունյաց թեմ	Գեղարքունիքի մարզ	2011 հունիս - 2011 օգոստոս	
	11-ICD1/4	Մեքենայի գնում ծրագրերի վերահսկման նպատակով	ՀԱՆ Գեղարքունյաց թեմ	Գեղարքունիքի մարզ	2011 հոկտեմբեր - 2011 նոյեմբեր	
6.	11-ICD2	Գյումրիի սոցիալական կենտրոն	ՀԱՆ Շիրակի թեմ	Շիրակի մարզ	2011 հունվար - 2011 դեկտեմբեր	22,175,890
7.	11-ICD3	ՄԻԱՎ-ի կանխարգելում, հովվական խնամք և աջակցություն Հայաստանում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց համար	Հայաստանյան Կլոր սեղան	Երևան և հարակից մարզեր	2011 սեպտեմբեր – 2011 դեկտեմբեր	9,671,824
	11-ICD3/1	ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցերեկային կենտրոն	ՀԱՆ Արարատյան Հայրապետական թեմ	Երևան և հարակից մարզեր	2011 սեպտեմբեր–2011 դեկտեմբեր	
8.	11-ICDm1	Ընտանեկան հանրամատչելի գրադարանի համայնքում	«ՀՀ Դատավորների Միություն» ՀԿ	Երևան	2011 փետրվար - 2011 սեպտեմբեր	5,338,000
9.	11-ICDm2	Մեծամորի համայնքային կենտրոն	«Զանգակատուն» ՀԿ	Արմավիրի մարզ	2011 հունվար-2011 դեկտեմբեր	16,425,000
10.	11-ICDm3	Համայնքային կենտրոնների զարգացում Գայ և Քարակերտ գյուղերում	ՀԱՆ Արմավիրի թեմ	Արմավիրի մարզ	2011 մայիս - 2011 դեկտեմբեր	7,292,250
11.	11-ICDm4	Մեղվաբուծությունը՝ զարգացման ուղի 2011	Հայաստանյան Կլոր սեղան	Տավուշի մարզ	2011 հունվար - 2011 դեկտեմբեր	4,683,802
12.	11-ICDm5	Գավառի համայնքային կենտրոն 2010-2012	ՀԱՆ Գեղարքունյաց թեմ	Գեղարքունիքի մարզ	2011 հունվար - 2011 դեկտեմբեր	9,798,414
13.	11-ICDm6	Համակարգչային գրագիտություն բոլորի համար	Հայաստանյան Կլոր սեղան	Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի և Կոտայքի մարզեր	2011 հունվար - 2012 դեկտեմբեր	1,511,660

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՈՒՄ

N	Ծրագրի համար	Ծրագրի անվանում	Իրականացնող կազմակերպություն	Իրականացման վայր	Տևողություն	Բյուջեն 2011թ.
14.	11-ICDm7	Սոցիալ-տնտեսական վիճակի բարելավում Հայաստանի ընտրված մարզերում, 2011-2015			2011 հունվար - 2011 դեկտեմբեր	13,074,090
	11-ICDm7/1	Զրիան պոմպի ֆոտովոլտայիկ համակարգի տեղադրում Արմավիրի մարզում	Հայաստանյան Կլոր սեղան, «ԷԿՈ 99» ՀԿ	Արմավիրի մարզ	2011 հունվար -2011 դեկտեմբեր	
	11-ICDm7/2	Կանաչ Էջմիածին	Հայաստանյան Կլոր սեղան	Արմավիրի մարզ	2011 հունվար -2011 դեկտեմբեր	
	11-ICDm7/3	Տավուշի մարզում մեղրի արտադրության ընդլայնում	Հայաստանյան Կլոր սեղան	Տավուշի մարզ	2011 հունվար - 2011 դեկտեմբեր	
15.	11-ICDm8	Երիտասարդ սերնդի զարգացման ծրագիր Մարտակերտում և Շուշիում	Հայ Ավետարանական Եկեղեցի	ԼՂՀ	2011 հոկտեմբեր - 2013 մարտ	3,415,080
	11-ICDm8/1	Մարտակերտի մանկապարտեզի ցանկապատում	Հայ Ավետարանական Եկեղեցի	ԼՂՀ	2011 հոկտեմբեր - 2011 դեկտեմբեր	
	11-ICDm8/2	Համակարգչային կենտրոնի հիմնում Շուշիում	Հայ Ավետարանական Եկեղեցի	ԼՂՀ	2012 ապրիլ - 2013 մարտ	
16.	11-ICDm9	Արագ արձագանքում Տավուշի մարզի սողանքին	Հայաստանյան Կլոր սեղան	Տավուշի մարզ	2011 հոկտեմբերի 3-14	4,706,893
17.	11-ICDm10	Փնորգյան հողերի ձեռնարանի համար բիոէթիկայի դասընթացի մշակում	Հայաստանյան Կլոր սեղան	Արմավիրի մարզ	2011 հոկտեմբեր - 2011 դեկտեմբեր	5,323,240
18.	11-ICDs1	Կանաչ ուխտագնացության քաղաք	Հայաստանյան Կլոր սեղան	Արմավիրի մարզ	2011 հունվար - 2011 դեկտեմբեր	1,374,432
19.	11-ICDs2	Սևանի Վազգենյան դպրանոցի պարբերականի տպագրություն	Հայաստանյան Կլոր սեղան	Գեղարքունիքի մարզ	2011 հունվար - 2011 մարտ	176,400
20.	11-ICDs3	Ծաղկազարդը տոնում են մանուկները	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	ՀՀ մարզեր	2011 մարտ - 2011 ապրիլ	700,000
21.	11-ICDs4	Կանաչ հյուրընկալություն	«Հայ Միասնության Խաչ» ՀԿ	Արմավիրի մարզ	2011 հունվար - 2011 հունիս	2,737,500
22.	11-ICDs5	Համահայկական հայագիտական երիտասարդական օլիմպիադա	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	ՀՀ մարզեր	2011 հուլիս -2011 օգոստոս	1,500,000
	11-ICDs6	Հարկային օրենսդրության ուսուցում	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	Արմավիրի մարզ	2011 հուլիս - 2012 հունիս	
23.	11-ICDs7	Ամառային ճամբար	«Թաթուլ Կրպեյան» ՀԿ	Տավուշի մարզ	2011 օգոստոսի 1-17	1,397,780
24.	11-ICDs8	Այգեպարի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	«ՇԷՆ» ԲՀԿ	Տավուշի մարզ	2011 հունիս - 2011 հոկտեմբեր	1,600,000
25.	11-ICDs9	Երեխաները մեր ապագան են	ՀԱՆ Արմավիրի թեմ	Արմավիրի մարզ	2011 նոյեմբեր - 2012 մայիս	342,147
26.	11-ICDs10	Հոգևոր դաստիարակությունը առողջ ընտանիքի գրավական	ՀԱՆ Վայոց Ձորի թեմ	Վայոց Ձորի մարզ	2011 հոկտեմբեր - 2012 մայիս	958,750
27.	11-ICDs11	Ընտանեկան հանրամատչելի գրադարանի համալրում	«ՀՀ Դատավորների Միություն» ՀԿ	Երևան	2011 նոյեմբեր - 2011 դեկտեմբեր	2,635,000

2011 թ. իրականացվել է 27 ծրագիր, որնցից ներկայացնում ենք մի քանիսը:

Լեռնային համայնքների կայուն զարգացում - SO 21

Ծրագրի նպատակն է ստեղծել կայուն զարգացման, բնական ռեսուրսների կայուն կառավարման և աղքատության վերացման համար պայմաններ Հայաստանի հինգ անբարենպաստ լեռնային համայնքներում:

Հաշվի առնելով մի շարք կարևոր խնդիրներ, որոնք նպաստում են լեռնային շրջանների աղքատությանը և անհավասարությանը, ծրագիրը ներկայացրել է փոխկապակցված փաթեթ, որը թույլ է տվել մասնակցային հիմունքներով մշակել Տեղական օրակարգ 21-ը (SO21). բնական պաշարների կառավարում, լեռնային գյուղատնտեսություն և գյուղական եկամուտների դիվերսիֆիկացում, ինչպես նաև կարողությունների զարգացում և ինստիտուցիոնալ հզորացում:

Ծրագրի թիրախում են Գեղարքունիքի մարզի հինգ անբարենպաստ լեռնային համայնքների՝ Վերին Գետաշենի, Սեմյոնովկայի, Կարմիրաղբյուրի, Վաղաշենի և Լանջաղբյուրի շուրջ 20000 տղամարդիք և կանայք: Տեղերում ստեղծված քաղաքացիական նախաձեռնության խմբերի /ՔՆԽ/ օգնությամբ ապահովվել է թիրախային բնակչության առավելագույն թվով անդամների ներգրավվածություն սկսած ծրագրերի գաղափարների մշակման փուլից մինչև իրականացման և գնահատման փուլերը: Այդ խմբերը մշակել են SO21-ի կայուն զարգացման պլանները, ներառյալ առաջնահերթ ծրագրերը: Երկու խմբերը ջրի խողովակաշարերի և երկու մանկապարտեզների վերանորոգման ծրագրեր են իրականացվել թիրախային համայնքներից չորսում: Ընդհանուր ուղղակի շահառուների թիվը կազմել է մոտ 1,750: Այդ ծրագրերի իրականացումը մեծապես նպաստել է այս համայնքների կենսամակարդակի բարելավմանը:

Շահառու համայնքներում առկա բարձր սեզոնային արտադրողի և կլիմայական պայմանների պատճառով նշված համայնքներում գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունները սահմանփակ են: Հետևաբար, հիմնվելով բացահայտված կարիքների և զարգացման ներուժի վրա, եկամուտների դիվերսիֆիկացիան նախանշվել է որպես ծրագրի առաջնահերթ խնդիրներից մեկը, որի շրջանակներում նախատեսվել է աշխատել երկու հիմնական ուղղություններով՝ նպաստել օրգանական մեղվաբուծության զարգացմանն ու մեղրի արտադրությանը և դեղաբույսերի մշակությանը:

Ընտրված համայնքներում կայուն և շրջակա միջավայրը պահպանող գյուղատնտեսական գործունեության դիվերսիֆիկացումն ունենալով որպես հիմնական նպատակ կազմակերպվել են հետևյալ միջոցառումները. (1) բարձրացվել է թիրախային խմբերի իրազեկվածությունը դեղաբույսերի աճեցման ու մշակման, օրգանական մեղվաբուծության ու մեղրի արտադրության վերաբերյալ, ինչպես նաև (2) օժանդակել են համայնքներին դեղաբույսերի և օրգանական մեղրի արտադրության, օրգանական սերտիֆիկացման, բրենդինգի և վաճառահանության հարցերում:

Ամրապնդվել են թիրախային բնակչության կարողությունները համայնքի մոբիլիզացման, համայնքային բյուջետավորման, միջհամայնքային ասոցիացիաների, համայնքների մասնակցային զարգացման, օրգանական գյուղատնտեսության և շատ այլ բնագավառներում:

Հաշվետու ժամանակահատվածում կարևոր նվաճումներից են ՔՆԽ-ների ամրապնդումը, նրանց ակտիվ մասնակցությունը համայնքների մոբիլիզացման և ծրագրերի մասնակցային իրականացման գործընթացներում: ՔՆԽ-ների կողմից իրենց սեփական ուժերով առաջնահերթ ծրագրերի մշակումը, դրանց իրականացումը, ֆինանսական ներդրումները, միջոցների թափանցիկ բաշխումը և համայնքային բյուջեի մոնիտորինգը նպաստել են ծրագրի հաջողությանը:

Գյուճարի սոցիալական կենտրոն

Ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի ամենաաղքատ մարզերից մեկի՝ Շիրակի բնակչության սոցիալ-տնտեսական և կրթամշակութային պայմանների բարելավմանը, հոգևոր արժեքների համակարգի ձևավորմանն ու հարստացմանը: Շիրակի թեմի հովանու ներքո գործող Գյուճարի սոցիալական կենտրոնի ընդհանուր գաղափարն է նպաստել կայուն կենսապայմանների ապահովման և արժեհամակարգի հարստացման ամբողջական մոտեցումների զարգացմանը:

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՅՈՒՄ



Բուժքույրերի օրվան նվիրված հանդիպում Շիրակի թեմի Առաջնորդ Տեր Միքայել եպս. Աջապահյանի հետ

Ծրագրի թիրախային խմբերն են սոցիալապես անապահով մարդիկ, երեխաները, երիտասարդ կանայք, տարեցիները, հաշմանդամները, համայնքային ու մարզինալ խմբերը (թրաֆիկինգի զոհերը, օրինազանց և տևանկ մարդիկ և այլն), գործազուրկները և հոգեբանական խնդիրներ ունեցողները:

Համայնքային զարգացման այս ունիվերսալ կենտրոնը ստեղծվել և շարունակաբար ամրապնդում է իր դիրքերը՝ զարգացնելով բնակչության կարողությունները և նրանց օգնություն ցուցաբերելով իր հատուկ մշակված ծրագրի շրջանակներում: Կենտրոնում կարելի է ստանալ տեղեկատվություն, տեխնիկական աջակցություն, վերապատրաստման դասընթացներ և այլ ծառայություններ, որոնք անհրաժեշտ են խթանելու ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը ու ներգրավումը համայնքային զարգացման գործընթացում: Կենտրոնն առաջարկում է արժեքավոր արտադրողական, ոչ ֆորմալ և մասնագիտական կրթություն, հատկապես երիտասարդության համար:

Կենտրոնը բաց է բոլորի համար՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից, կրոնից և ծագումից: Այն ունի 20 աշխատակից և 25 կամավորներից բաղկացած խումբ:

2011 թվականին ևս կենտրոնի աշխատակազմն ու կամավորները կանոնավոր կերպով ընդգրկվել են կարողությունների զարգացման դասընթացներում, որպեսզի առավել արդյունավետ կարողանան ծառայություններ մատուցել սոցիալական, կրթական, երիտասարդական ծրագրերի և հանրային աշխատանքների ոլորտում: Անցկացվել են մի շարք ուսուցողական դասընթացներ ու քննարկումներ՝ սոցիալական աշխատանք և սոցիալական դիակոնիա, մարդու իրավունքներ, գենդերային հարցեր, սոցիալական գործընկերություն, կառավարում, շրջակա միջավայրի պաշտպանություն, առաջնորդություն, համայնքային մոբիլիզացիա և այլ թեմաներով: Կենտրոնն արդեն մշակել և զարգացրել է մի շարք մոդուլներ սոցիալական, կրթական, մշակութային, երիտասարդական և կամավորական աշխատանքների համար, մշակել և իրականացրել է ֆոնդահայթայթման իր ծրագիրը, կապեր է հաստատել տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:



"Հայկական զարդանախշեր" պարային համույթ



"Հերոնտոս" տարեցիների ակումբի ուխտագնացություն



Շախմատի օրվան նվիրված միջոցառում



Օգնության բաշխում տևայցի միջոցով



Միևի-տպարան: տձեռնահանում, գունավոր տպում, գրքերի կազմում, հրավիրատոմսերի, թերտոմսերի, հավաստագրերի պատրաստում



Կահույքագործության ուսուցում



Սահմանապահների օրվան նվիրված ընդունելություն Շիրակի թեմի Առաջնորդ Տեր Միքայել եպս. Աջապահյանի հետ

Կենտրոնը ղեկավարում է Էկումենիկ հոգաբարձուների խորհուրդը, որը կանոնավոր հանդիպումների միջոցով մշակում է կենտրոնի քաղաքականությունը և ռազմավարությունը, իրականացնում կենտրոնի աշխատանքի մոնիտորինգ և գնահատում: Շիրակի թեմը ֆինանսապես աջակցում և կիսում է կենտրոնի սպասարկման ընդհանուր ծախսերը:



Տնօրինք



Սուրբ Զատիկին նվիրված միջոցառում

Համայնքային կենտրոնների զարգացում Գայ և Քարակերտ գյուղերում

Ծրագրի նպատակն է վերականգնել քրիստոնեական հավատն ու արժեքները տեղական համայնքներում, բարձրացնել պատասխանատվությունը և բարելավել սոցիալ - տնտեսական պայմանները Գայ և Քարակերտ գյուղերում:

Շահառուներն են՝

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաները. Գայի ու մոտակա գյուղերի 155 աշակերտներ, Քարակերտի ու մոտակա գյուղերի 160 երեխաներ, 25 երիտասարդաց միության անդամներ, 12 տարեցներ:

Գայի համայնքային կենտրոն

2011 թ. մոտ 155 երեխաներ և երիտասարդներ Գայ, Ակնաշեն, Ապագա, Մեծամոր, Արաքս և Զրառատ գյուղերից ներգրավված են եղել հետևյալ ուսումնական խմբակներում՝

- Նկարչության խմբակ, որտեղ երեխաները և երիտասարդները սովորել են գրաֆիկական դիզայն, կոմպոզիցիա, մանրանկարչություն, նատյուրմորտ, բնապատկեր և այլն;
- Ասեղնագործության/ ուլունքագործության խմբակ, որտեղ երեխաները սովորել են պատրաստել թեմատիկ ձեռագործ աշխատանքներ, բացիկներ ու ծրարներ և այլն: Այս խմբակի երեխաները մասնակցել են տարբեր ցուցահանդեսների Արմավիր, Գայ, Մեծամոր, Ակնաշեն և Ապագա գյուղերում;
- Երգի խմբակ, որտեղ երեխաներն ու երիտասարդները սովորել են հայկական ժողովրդական և հոգևոր երգեր, եկեղեցական հիմներ և մանկական երգեր: Երգչախումբը երգել է պատարագներին, եկեղեցական տոնակատարություններին և այլն;
- Գորգագործության խմբակը վարել են կամավորները;
- Համակարգչային խմբակ՝ հիմնական համակարգչային գործառնական հմտություններ ձեռք բերելու համար:

Խմբակների մասին համայնքները տեղեկացվել են քաղաքապետարաններում և դպրոցներում փակցված հայտարարությունների, դպրոցների տնօրենների, ուսուցիչների և հոգևորականների միջոցով:

Համայնքի հոգևոր հովիվը պարբերաբար տնայցեր է կատարել և հանդիպումներ ունեցել մարդկանց հետ: Դրանց ժամանակ Աստվածաշնչից պատմություններ են ընթերցվել և քննարկումներ են ծավալվել քրիստոնեության պատմության, եկեղեցու, արժեքների, խորհուրդների, եկեղեցական տոների՝ Համբարձման, Սուրբ Թարգմանչաց տոնի և շատ այլ թեմաների շուրջ:

Իրականացվել է հիևզ ուխտագնացություն դեպի տարբեր եկեղեցիներ՝ ավելի քան 400 մարդկանց ակտիվ մասնակցությամբ: Կենտրոնը կազմակերպել է տարբեր միջոցառումներ, ցուցահանդեսներ, տոնակատարություններ, ինչպիսիք են, օրինակ՝ ,Աղետներն, ,Գարնանամուտն և ,Իմ հոգու գանձարանը թեմաներով ցուցահանդեսները, Power Point ներկայացում «Ոչ, մենք չենք մոռացել» խորագրով, նվիրված 1915 թ. Հայոց ցեղասպանությանը:



Սուրբ Զատիկին նվիրված միջոցառում



Հանդիպում հոգևորականների հետ

2011 թ. կենտրոնի 6 ուսումնական խմբակներն են հաճախել մոտ 155 երեխա: 15 մասնակիցներից բաղկացած եկեղեցական երգչախումբ է ստեղծվել, որն էլ պարբերաբար երգել է պատարագներին: 5 երիտասարդներ որպես սարկավագ ծառայել են համայնքի եկեղեցում: Կենտրոնի շրջանավարտները դասընթացներն ավարտելուց հետո էլ պահպանել են Կենտրոնի հետ կապն ու որպես կամավորներ աջակցել են դասավանդման և միջոցառումների կազմակերպման գործընթացում:

Քարակերտի համայնքային կենտրոն

Կենտրոնի հիմնական նպատակն է մատուցել քրիստոնեական, ոչ ֆորմալ և մասնագիտական կրթություն: Այս կենտրոնը նույնպես վարել է տարբեր խմբակներ, ինչպիսիք են, օրինակ՝ նկարչության խմբակը, որը նախատեսված է հիմնական և մասնագիտական հիմք դնել, որպեսզի խմբակի շրջանավարտները հետագայում կարողանան այդ ուղղությանը շարունակել և մասնագիտանալ միջնակարգ և բարձրագույն կրթության հաստատություններում: Այս դասընթացի շրջանավարտներից մի քանիսը շարունակել են իրենց ուսումը Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում և մասնակցել տարբեր ցուցահանդեսների:

Գործում է մասնագիտական դաշնամուրի խմբակ, որի համար գյուղապետարանը նվիրաբերվել է հինգ դաշնամուր: Այս խմբակը գյուղում և նրա հարևանությամբ միակն է, որ մատուցում է ամբողջական 7-ամյա միջնակարգ երաժշտական կրթություն, և 2011 թ. ընթացքում այնտեղ սովորել է 25 աշակերտ: Շրջանավարտներից մեկը շարունակել է իր ուսումը Արմավիրի արվեստի քոլեջի դաշնամուրային բաժնում: «Տաճատե» պարային խմբակին մասնակցել են 30 երեխաներ և երիտասարդներ, որոնք սովորել են ազգային, ժողովրդական և դասական պարեր: 10 երեխա հաճախել է երգի խմբակ, սովորել հոգևոր, դասական և ազգային երաժշտության:

Քրիստոնեության և Աստվածաշնչի ուսումնասիրության դասընթացները բաց էին կենտրոնի և համայնքի բոլոր անդամների համար: Երիտասարդաց միությունը աջակցում էր Քարակերտի և հարևան գյուղերի եկեղեցական և աշխարհիկ տոնակատարությունների և միջոցառումների, միայնակ տարեցների խնամքի, Կենտրոնի գործունեության կազմակերպման գործում: Կենտրոնն ունի նաև թատերական խումբ, որը գործում է կամավորական հիմունքներով, և 2011 թ. ներգրավել է 15 երեխա: Իսկ 2011թ. մայիսից սկսած Կենտրոնը 30 երեխաների մատուցել է նախադպրոցական կրթական ծառայություններ:

2011թ. սկսած ՀԱԵ Արմավիրի թեմը Թալինի տեխնիկական և մասնագիտական կրթության քոլեջի հետ համատեղ Կենտրոնում նախաձեռնել է մասնագիտական վարսահարդարման և մատնահարդարման դասընթացներ: Ինը երիտասարդներ Քարակերտից և հարևան գյուղերից ավարտել են այն, ստացել վկայականներ ՀՀ կրթության և Գիտության նախարարության կողմից և կիրառել ստացված հմտությունները իրենց համայնքների գեղեցկության սրահներում:



Հանդիպում հոգևորականների հետ



Մեծամորի կենտրոնի երգչախումբը



Մեծամորի տիկնիկային. ներկայացումից հետո

2011 թ. Կենտրոնի ուսումնական խմբեր հաճախել են 4 - ից 17 տարեկան 160 երեխա, 15 երիտասարդներ ներգրավված են եղել երիտասարդաց միության գործունեության մեջ, 12 տարեց ստացել է սոցիալական աջակցության և տնային խնամք, մոտ 30 տնայցեր են կատարվել և տեղական համայնքների մոտ 200 անդամների մասնակցությամբ հանդիպումներ և միջոցառումներ են իրականացվել:

Արմավիրի թեմը ֆինանսավորում է Կենտրոնի քրիստոնեական դաստիարակության և պարի ու երգի խմբակները, հոգում է սպասարկման ծախսերի մի մասը:

ՀԿՍ-ը, բացի Քարակերտի և Գայի համայնքային Կենտրոնների ամենօրյա գործունեությանն աջակցելուց, պարբերաբար ներգրավել է Կենտրոնների անձնակազմերը կարողությունների զարգացման զանազան դասընթացների և միջոցառումների մեջ:

Մեծամորի համայնքային կենտրոն

Ծրագրի նպատակը Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի համայնքային կյանքի զարգացումն է և համայնքի ակտիվացումը՝ կիրառելով ,Զանգակատունե ԲՀԿ-ի կողմից մշակված ուրույն քրիստոնեական սոցիալական աշխատանքի մոդելը: Ծրագիրն ունի երեք հիմնական խնդիր՝ նպաստել քաղաքի սոցիալական, բնապահպանական և տնտեսական զարգացմանը:

Ծրագրի շահառուները 94 ամենակարիքավոր ընտանիքներն են /430 անդամով/, որոնք ստանում են սոցիալական, հոգեբանական և կրթական աջակցություն: Ավելի քան 3000 շահառուներ բազմազան հանդիպումների, ներկայացումների, համերգների, տոնակատարությունների և ուխտագնացությունների ակտիվ մասնակիցներն են:

Աջակցությունն ուղղվել է մարզիկնալ ընտանիքներին և դեպիանտ վարքով երեխաներին, որի արդյունքում տեղի են ունեցել աշխարհայացքային փոփոխություններ, ամրապնդվել է հավատը սեփական ուժերի նկատմամբ և զարգացել են իրենց կյանքը վերափոխելու և բարելավելու ունակություններ: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ աշխատանքներում ընդգրկվել են հիմնականում երեխաներ և երիտասարդներ, և կարելի է հուսալ, որ Մեծամորի զարգացման համար ստեղծվում են հուսալի նախադրյալներ:

Գործել են արվեստների և արհեստների հետևյալ խմբակները, որտեղ շահառուները ստացել են համակարգչային գիտելիքներ և հմտություններ (29 երիտասարդ և 4 մեծահասակ), երգի («Արևածաղիկ» երգչախումբն ունեցել է 25 մասնակից և տվել է 3 արտագնա համերգ), նկարչության (3 խումբ 92 մասնակցով, կազմակերպվել է 3 ցուցահանդես), մաքրամեծի (24 աղջիկ և իրենց մայրիկները), «Փալանչո» տիկնիկային թատրոնը (20 մասնակից, 18 արտագնա ներկայացում) մասնակցել է տիկնիկային թատրոնների Դսեղի միջազգային փառատոնին: Ներկայացումներից մեկը նվիրված էր մարդավաճառությանը և թե ինչպես երեխաները կարող են պաշտպանվել՝ իմանալով իրենց իրավունքները: 30 երեխա կանոնավոր աշխատել են «Դրախտիկ» պարտեզում՝ մշակել, գեղեցկացրել և ջրել բույսերը՝ իրապես նպաստելով իրենց քաղաքի բնապահպանական բարելավմանը: Սպորտային խմբակն ունեցել է 75 մասնակից:

Քաղաքացիական նախաձեռնության խումբը (ՔՆԽ) դարձել է ակտիվ մասնակիցը ոչ միայն Կենտրոնի աշխատանքների, այլև դերակատարություն ունի քաղաքի համայնքային կյանքում: ՔՆԽ-ն Մեծամորի քաղաքապետարանին ներկայացրել է Համար 2 մանկապարտեզի սանիտարական վիճակի և ծանրաբեռնվածության հետ կապված խնդիրները, որի արդյունքում մանկապարտեզի բյուջեն 2012թ. ավելացել է:

Կենտրոնն ունի կարևոր ինտեգրատիվ ազդեցություն համայնքի վրա՝ մարդկանց համախմբելով համատեղ գործողությունների շուրջ, ինչպիսիք են մշակութային միջոցառումները, բնապահպանությունը (աղբահավաք, ծառատունկ): Խորացել են ներհամայնքային կապերը, լայնորեն տարածվել է փոխօգնությունը համայնքի



Մեծամորի երիտասարդական ակումբ

անդամների միջև: Նկատելիորեն բարելավվել է ընտանեկան մթնոլորտը, օր՝ գրանցվել է ֆիզիկական բռնության նվազում 28%-ով, 44%-ով պակասել է հոգեբանական բռնությունը, 20%-ով քիչ են երեխաների անտեսման դեպքերը և այլն:

Արհեստների ուսուցման արդյունքում ստացած հմտությունների շնորհիվ մոտ 10 %-ով բարձրացել են շահառու ընտանքիների եկամուտները՝ նոր աղբյուրներից, ինչպիսիք են, օրինակ, ձեռքի աշխատանքների վաճառքը: Վաճառքից ստացած գումարների մեկ երրորդն ուղղվել է Կենտրոնի աշխատանքների շարունակությանը: Շատ երիտասարդներ այստեղ են ստացել իրենց առաջին աշխատավարձը:

Ապագային միտված, նաև հուսադրող փոփոխությունը ուղղվածությունն է դեպի երիտասարդությունը և նրանց իրավունքների պաշտպանությունը: Երիտասարդությունը ապագան է՝ ունակ ընկալելու նոր գաղափարներ, նվիրվել ու ոգևորվել, ահա թե ինչու երիտասարդներին ուղղված ներդրումներն այդքան կարևոր են:

Համապարփակ համայնքային զարգացում - Գավառ 2010-2012

Նախագծի ընդհանուր նպատակն էր երիտասարդների և կանանց խմբերի հզորացումը՝ նրանց դարձնելու քաղաքացիական հասարակության դերակատարներ: Ծրագրի խնդիրներն էին Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում նախադրյալներ ստեղծել սոցիալ-տնտեսական, մշակութային և շրջակա միջավայրի վիճակի բարելավման համար:

Շահառուների քանակն էր՝ ուսումնավարժանքների 372 մասնակից և քննարկումների ու տոնակատարությունների մոտ 2000 մասնակից:

2011 թվականին Գավառի համապարփակ համայնքային զարգացման կենտրոնի գործունեությունը շարունակվել է երեք հիմնական ուղղություններով՝ սոցիալական, տնտեսական և շրջակա միջավայրի վիճակների բարելավում: Գործունեության կարևոր մասն են կազմել համայնքային զարգացման ուսումնավարժանքները, ներառյալ հզորացում, կարիքների գնահատում, իրավունքներ և պարտականություններ և այլ թեմաները: Մարդու իրավունքների գրադարան է հիմնվել՝ ավելի քան 2600 գրքով:

Երիտասարդաց միությունը պարբերաբար կազմակերպել է բանավեճեր, կլոր սեղաններ, մշակել հեռուստահաղորդումներ՝ նվիրված բնապահպանական, սոցիալական ու բարոյական, գեղերային բռնության խնդիրներին, որոնք կանոնավոր հեռարձակվել են: Այս բոլոր գործողությունները կարևոր միջոցներ են (ա) հավասար իրավունքների, արժանապատիվ կյանքի և համայնքային մասնակցության ճգնաժամային խնդիրների հզորացման; (բ) ԲՆԽ-ի, Երիտասարդաց միության և կանանց խորհրդի միջոցով ընդլայնելու Գավառի կենտրոնի աշխատանքները տարբեր ուղղություններով, (գ) բնապահպանական, մարդու իրավունքների, համայնքային զարգացման ուսուցումները, քննարկումները, գործնական աշխատանքները, հեռուստահաղորդումները և այլ գործողություններ նպաստել են տեղի երիտասարդության և կանանց կարողությունների հզորացմանը:

Համայնքային զարգացման, արվեստների և արհեստների դասերին մասնակցել են 175 կին և տղամարդ:

Կարգմակերպվել են 10 բնապահպանական միջոցառումներ. քննարկումներ, ուսուցումներ, երիտասարդական ամառային ճամբարներ: Աղբահանությունը դարձել է ամենօրյա գործ՝ Կենտրոնի երիտասարդության բոլոր ուխտագնացությունները ուղեկցվում են եկեղեցիների և պատմական հուշարձանների շրջակայքի մաքրման աշխատանքներով:

Ծրագրի ընթացքում սկսվել է կենտրոնի ռազմավարական պլանի մշակման գործընթացը: Ստեղծվել է 15 աշխատատեղ և երկու փոքր ձեռնարկություն (փուռ, գորգագործական/ ասեղնագործության արհեստանոց):



Գավառի կենտրոնի տիկնիկային թատրոնի խմբակը



Գավառի համայնքային կենտրոնում

«Կանաչ Էջմիածին»

Ծրագրի նպատակն է Էջմիածինը դարձնել կանաչ ուխտագնացության քաղաքի մոդել՝ գործնական քայլեր նախաձեռնելով ուխտագնացների և զբոսաշրջիկների համար քաղաքը գրավիչ, կանաչ և բնախնայ վայր դարձնելու, որտեղ նրանք իրենց կզգան պատմական քրիստոնեական ժառանգության մաս, միևնույն ժամանակ վայելելով ընտանեկան հյուրընկալության ջերմ մթնոլորտը:

Ծրագրի շահառուներն են Էջմիածնի ողջ 58000-անոց բնակչությունը, ինչպես նաև քաղաք և սրբավայրեր այցելող հազարավոր զբոսաշրջիկներ և ուխտագնացներ, որոնց թիվը տարեցտարի ավելանում է:

Բնապահպանական իրավիճակը բարելավելու և ուխտավորների համար քաղաքը գրավիչ դարձնելու նպատակով իրականացվում է բազմակողմանի, սակայն տրամաբանորեն կապակցված գործողությունների ծրագիր, որպես հիմնական բաղադրիչներ ունենալով պատմական Ներսիսյան անտառի վերականգնումն ու կառավարումը, ուխտավորների համար ավանդական և առողջ սնունդ ապահովելը և մի շարք այլ ծրագրեր:

2011 թ. ՀԿՍ-ի, ՀԱԵ-ի և Էջմիածնի քաղաքապետարանի ներկայացուցիչները մասնակցեցին Իտալիայի Ասիզի քաղաքում, Կրոնների և բնապահպանության դաշինք-ի կազմակերպած կոնֆերանսին, որտեղ Էջմիածին քաղաքը և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին դարձան Կանաչ ուխտագնացության ցանցի հիմնադիր անդամներ: Մասնակցությունն օգնեց կապեր հաստատելու Էջմիածնի և աշխարհի այլ ուխտավայրերի միջև:

Անցյալում Մայր Աթոռի շուրջ ձգվելով տասնյակ հեկտարներով, պատմական Ներսիսյան անտառը կոմունիստական իշխանության օրոք բռնագրավված էր՝ հետզհետե փորքանալով ու քայքայվելով: Այժմ անտառից մնացել է մոտ 8,5 հա, որն էլ վերադարձվել է Մայր Աթոռին: Ծրագիրը սկսելուց առաջ անտառը լքված ու անխնամ տեսք ուներ՝ ամենուր դեղնած խոտ ու անմշակ ծառեր, ծառերից կախված չորացած ձյուղեր, աղբի կույտեր: Շատ հատվածներ ջունգլիների էին նմանվում՝ անանցանելի թավուտներով, չորացած խոտածածկով և թփուտներով: Հեռավոր մի մաս ամբողջովին այրված էր չհանգցրած ծխախոտի և խարույկների պատճառով:

Անտառի վերականգնումն սկսելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ ուսումնասիրվել է անտառի ամբողջ տարածքը, ապա մշակվել վերականգնման պլան՝ օգտագործելով Էնդեմիկ ծառատեսակներ, ապա դենդրոլոգի դեկավարությամբ սկսվել են բարեկարգման աշխատանքները: Մաս առ մաս մաքրվել է չորս հեկտար, կտրվել են չոր ծառերն ու ձյուղերը: Արմատախիլ են արվել թփուտները, կատարվել են սանիտարական հատումներ: Հավաքվել և Էջմիածնի աղբավայր է տեղափոխվել տոննաներով աղբ: Անտառի մուտքի մոտ գտնվող մանկական խաղահրապարակին մոտ մասը ցանկապատվել է՝ տարածքը մեկուսացնելու համար, քանի որ հովեկները այստեղ մուտք էին գործում մեքենաներով և ավտոբուսներով՝ զբոսախնջույքներից հետո թողնելով աղբի բլուրներ:



Կանաչ հյուրընկալություն



Ակումբային և սոցիալական վերահստեգրման միջոցառում երեխաների համար



Աստվածաշնչի ուսումնասիրության դաս

Ծրագրի բաղադրիչներից էր նաև «կանաչ» հյուրընկալության միջավայրի ստեղծումը՝ ներառյալ ճաշարանը, ուր ուխտավորներին մատուցվում է հայկական ավանդական և առողջարար սնունդ գունազեղ վայրում՝ վերականգնված հայկական հին ապրելակերպով: 40 կարիքավոր և/կամ սահմանափակ հնարավորություններով երիտասարդներ սովորել են ազգային խոհանոցի գաղտնիքները, իսկ յոթը (4 աղջիկ և 3 տղա) արդեն աշխատում են այստեղ: Արդեն ճաշարան են այցելել 2300 հյուր՝ համտեսելով տեղական առողջարար սնունդը:

ՄԻԱՎ-ի կանխարգելում, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամք և աջակցություն Հայաստանում

Ծրագրի նպատակն է կանխարգել ՄԻԱՎ-ը և խնամք և աջակցություն տրամադրել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ներարկային ճանապարհով թմրամիջոցներ օգտագործողներին:

Ծրագրի հիմնական բաղադրիչներից մեկը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ներարկային ճանապարհով թմրամիջոցներ օգտագործողների համար ցերեկային կենտրոնն է, որը հիմնադրվել է 2009 թ., և Հայաստանի ամբողջ տարածքում ծառայություններ է տրամադրել մոտ 220 մարդու: Կենտրոնի գործունեության շրջանակում են հովվական խնամքը և աջակցությունը, սոցիալական ու հոգեբանական աջակցությունը և օգնությունը Աստվածաշնչի ուսումնասիրության, հավասարը-հավասարին խորհրդատվությունների, ինքնօգնության խմբերի, տնայցերի, լուսաբանման աշխատանքների, ակումբային և սոցիալական վերահստեգրման միջոցառումների, մանկական խմբերի և այլնի միջոցով: Կենտրոնը նաև շահառուներին հնարավորություն է ընձեռել ունենալու իրենց ժամանակը հաճելի և օգտակար օգտագործելու վայր, շփվելու, փորձը կիսելու, միջոցառումներ կազմակերպելու, այլևայլ տեսակի աջակցություն ստանալու համար: Կենտրոնն օգնում է շահառուներին դառնալու իրենց համայնքների լիիրավ անդամներ՝ սրանց ընդգրկելով ծխական կյանք, ինչպես նաև բնակչությանն իրագրելով ՄԻԱՎ-ի խնդիրներ մասին:

Ցերեկային կենտրոնը՝ լինելով հարմարեցված շահառուների կարիքներին, աշխատել է նաև ներարկային ճանապարհով թմրամիջոցներ օգտագործողների հետ՝ ռիսկային գոտում գտնվող բնակչության շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև իրականացրել է սոցիալական աջակցության և հովվական խնամք մեթադոնային փոխարինման թերապիա անցնող ներարկային ճանապարհով թմրամիջոցներ օգտագործողների համար: Ծրագիրն օգնել է սրանց հոգևոր ռեաբիլիտացիայի միջոցով ինտեգրվել համայնքներում և վերադառնալ առողջ ապրելակերպի: 2011թ. շուրջ 80 հիվանդներ, որոնք ստանում են մեթադոնային բուժում և ստացիոնար բուժում ստացող 60 անհատներ ու սրանց ընտանիքի անդամներ մասնակցել են կենտրոնի միջոցառումներին:

Երիտասարդների և բարձր ռիսկային գոտում գտնվող բնակչության համար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քահանաները ՄԻԱՎ-ի վերաբերյալ



Համակարգչային դաս "Սոցիալական աջակցության կենտրոն" ՀԿ-ում

իրազեկության բարձրացման միջոցառումների շարք են իրականացրել Երևանում և շրջաններում: Մի շարք սեմինարներ են կազմակերպվել բանակում և բանտերում: Բազմազան միջոցառումներ են կազմակերպվել Կենտրոն այցելող թե երեխաների, թե մեծահասակների համար՝ ուխտագնացություններ, զբոսախնջույքներ, արձակուրդներ Սևանա լճում, որոնք շատ կարևոր են Կենտրոնի շահառուների հանրայնացման համար:

Ավելին, ծրագիրը ձգտել է ազգային մակարդակով համադաշնացնել ՄԻԱԿ-ին առնչվող բոլոր միջոցառումները, հնարավորություն տալ հանրապետության բոլոր թեմերին և եկեղեցիներին իրականացնել միևնույն միջոցառումները եկեղեցու ամենօրյա կյանքում և հատուկ իրադարձությունների ժամանակ, ինչպիսիք են դեկտեմբերի 1-ին նշվող ՁԻԱՀ-ի Համաշխարհային օրը և ՁԻԱՀ-ից մահացածների հիշատակման միջազգային օրվան նվիրված մոմավառությունը, որոնք իրենց հերթին բարձրացրեցին բնակչության իրազեկությունը և ՄԻԱԿ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականության և խարանի դեմ պայքարելու եկեղեցու պարտավորությունը: Քահանաները նաև աշխատել են ընտանիքներում, դպրոցներում, մանկապարտեզներում և աշխատավայրերում, որտեղ ՄԻԱԿ-ով ապրող մարդիկ ենթարկվում են խտրականության և սոցիալական մեկուսացման:

Ներկայումս Կենտրոնը գործում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արարատյան Հայրապետական Թեմի հովանու ներքո:

«Համակարգչային գրագիտություն բոլորի համար»

Նոր հազարամյակի սկիզբը նշանավորում է մարդկային քաղաքակրթության նոր փուլ, որի առանձնահատկություններից մեկն է տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) դերի աննախադեպ աճը մեր կյանքում: SS-ները հնարավորություն են տալիս բազմապատկել այսօրվա գիտելիքներն ու հոգևոր արժեքները, ընդլայնելով գիտության ու տեխնիկայի նվաճումների կիրառման ոլորտները: Արդեն կարիք կանախապատրաստել մարդկանց ապրելու և աշխատելու ժամանակակից իրազեկված և ինտեգրացված աշխարհում:

2007թ-ի դեկտեմբերին Հայաստանյան Կլոր սեղանը նախաձեռնեց «Համակարգչային գրագիտություն բոլորի համար» ծրագիրը, որի նպատակն էր նպաստել խոցելի համայնքային խմբերի կայուն զարգացմանը՝ ուսուցանելով նրանց համակարգչային գրագիտություն, որն անհրաժեշտ նախապայման է արդի աշխատանքային շուկայի և ապագա մասնագիտական կողմնորոշման համար: Ծրագրի խնդիրներն էր ինտեգրել տեղեկատվական տեխնոլոգիաները հասարակության մեջ՝ ձգտելով հասնել երկարաժամկետ զարգացումների հետևյալ ռազմավարական ուղղություններով.

1. Կրթություն - բարելավել համակարգչային դասընթացների որակը կենտրոններում
2. սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում - հասարակությանը հասու դարձնել ինտերնետ տեղեկատվական տեխնոլոգիաներին՝ զարգացնելով սովորողների համակարգչային գրագիտության մակարդակը որպես կարևոր գործիք իրենց հետագա աշխատանքի և կրթության ասպարեզում
3. քաղաքացիական հասարակության զարգացում - SS-ների ընձեռած հնարավորությունների կիրառմամբ, հաղորդակցման, տեղեկատվության, փոխանակման ծրագրերի իրականացում
4. համակարգչային կենտրոնների կայուն զարգացում - ապահովել վերջիններիս ադմինիստրատիվ և ծրագրային աշխատանքների արդյունավետ իրականացումը:

Ծրագրում ներգրավված են եղել հասարակության խոցելի խմբերը՝ երիտասարդներ, կանայք, գործազուրկներ, սոցիալապես անապահով խավեր, ավելի քան 3000 մարդ մասնակցել են համակարգչային կենտրոնների



"Ինֆոգիտակ" համակարգչային մրցույթ Գյումրիի սոցիալական կենտրոնում

տարբեր գործընթացներին, որն էլ հետագայում տվել է իր դրական և շոշափելի արդյունքները: Ծրագիրը կարևոր նշանակություն է տվել և կենտրոնների աշխատակիցների արհեստավարժության և կարողությունների զարգացմանը՝ պարբերաբար կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ և այլ միջոցառումներ:

2011 թ. ծրագրի շրջանակներում իրականացված բոլոր գործողություններն ուղղված են եղել համակարգչային կենտրոնների կայուն զարգացմանը, որն էլ ենթադրում է զարգացած տեխնոլոգիական կենտրոններ, որոնք գյուղական համայնքներին կմատուցեն բազմապիսի ծառայություններ, երիտասարդներին կտան հեռաուսուցման, փոխանակման, կրթության, միջմշակութային շփումների հնարավորություններ: 2011 և 2012թթ-ին իրականացվել են հետևյալ գործողությունները.

- Դասավանդում համակարգչային կենտրոններում
- Դասընթացավարների կարողությունների զարգացում՝ վերապատրաստումներ, հանդիպումներ, փոխանակումներ
- Տեխնոլոգիայի վերազինում և համացանցային կապ կենտրոններում
- Համակարգչային կենտրոնների կայունությանն ուղղված միջաջառումների իրականացում, որոնք նպաստում են նաև հասարակական կապերի զարգացմանը և ծրագրի շարունակականությանը:

Ծրագիրն իրականացվում է Հայաստանի 4 մարզերի 13 համակարգչային կենտրոններում, որոնք գտնվում են համայնքային զարգացման կենտրոններում: 2012թ-ին ևս մեկ համակարգչային կենտրոն է հիմնվել Արցախի թեմում՝ Շուշիում:

Շոշափելի արդյունքներն են՝ սովորողների թիվը 456-ից հասել է 780-ի 2010թ-ի համեմատությամբ, նրանք մասնակցել են դասընթացներին և ստացել ավարտական վկայականներ, սրանցից 32-ն աշխատանք են գտել, ավելի քան 950 մարդ օգտվել են կենտրոնների տարբեր ծառայություններից / օգտագործել են ինտերնետը տեղեկատվություն ստանալու, հաղորդակցման համար, ռեսուրսները տպելու, սկանի համար, իրակացրել են բաց դասեր և միջոցառումներ դպրոցների աշակերտների և ուսուցիչների հետ համագործակցության նպատակով և այլն/, ավելի քան 2000 մարդ տարբեր տիպի ինֆորմացիա է ստացել կենտրոններից, որից 1000-ը՝ Գյումրիի համակարգչային կենտրոնում, կամավորներն ակտիվորեն մասնակցում են կենտրոնների աշխատանքներին:

Նպատակ ունենալով բարելավել դասընթացների որակը և ավելացնել նրանց քանակը կենտրոններում՝ ՀԿՍ-ը աշխատում է զարգացնել աշխատակիցների արհեստավարժությունը նրանց ընդգրկելով դասընթացներում, բարելավել դասավանդումը ինտերակտիվ ու վիզուալ մեթոդներով, վերազինել համակարգչային

կենտրոնները, խթանել շահութաբեր և հասարակական կապերի զարգացմանը նպաստող միջոցառումները:

ՀԿՍ-ը ապահովում է համակարգչային կենտրոնների աշխատակազմի կարողությունների զարգացումը ոչ միայն արհեստավարժության դասերով, այլև կազմակերպում է հանդիպումներ, ստեղծում փորձի փոխանակման հնարավորություններ: 2011թ-ի դեկտեմբերին և 2012թ-ի հունիսին ՀԿՍ-ը, համագործակցելով Մայքրոսոֆթի հայաստանյան գրասենյակի հետ, իրակացրեց համապատասխանաբար 8 և 6-օրյա դասընթացներ Մայքրոսոֆթի նորարարական կենտրոնում՝ ներառելով Windows 7 և MS Office 2010 ծրագրերը:

Վերազինումը խիստ կարևոր նախապայման է համակարգչային կենտրոնների զարգացման համար: 2011թ-ի օգոստոսին կենտրոններին տրամադրվեց 15 համակարգիչ, իսկ 2012 թ հունիսին ևս 14-ը: Սրանով դյուրին դարձավ Մայքրոսոֆթի նոր ծրագրային փաթեթների, դիզայնի, ծրագրավորման, արագ տպման և այլ ծրագրերի ուսուցումը:

Զգտելով կայունության կենտրոններում ընդլայնում են ավանդական ուսուցման մեթոդները որակյալ դասերի և ուսուցման առաջավոր մեթոդների միջոցով՝ ծառայեցնելով դրանք ի շահ համայնքների: Երիտասարդներն ու համայնքների այլ անդամները բարելավում են իրենց կարողությունները ինտերնետի կիրառմամբ և կրթական/ խթանման/ ինֆորմացիոն համայնքահեն միջոցառումների և մրցույթների իրականացմամբ /«Իմ հայրենի եզերքը» Մայքրոսոֆթի աջակցությամբ, «Ինֆոգիտակ» 32 դպրոցների մասնակցությամբ Գյումրիում և այլն/, ինքնուրույն աշխատանքով, շահառուների անմիջական մասնակցությամբ, որը զարգացնում է երիտասարդների վերլուծական ու ստեղծագործական կարողությունները, ամրապնդում է գործառնական, հաղորդակցման, կազմակերպական հմտությունները, խթանում է կամավորությունը: Տարբեր համայնքների բնակիչներ մասնակցում են ծրագրերին՝ օգտագործելով ինտերնետն ու տեղեկետվական միջոցները/ Արմավիրի թեմի երիտասարդները մասնակցել են OSI-ի կողմից առաջարկված դրամաշնորհային ծրագրին և հաղթել/:



ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

actalliance



Կարողությունների զարգացման նախաձեռնության նպատակն է խթանել քաղաքացիական հասարակության զարգացումը մարդկային և ինստիտուցիոնալ ներուժի զարգացման, սիստեմատիկ ուսուցման և տարբեր ոլորտների վերաբերյալ եկեղեցիների, ՀԿ-ների, նրանց ցանցերի միջև տեղեկատվության տարածման միջոցով

ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

N	Ծրագրի համար	Ծրագրի անվանում	Իրականացնող կազմակերպություն	Իրականացման վայր	Տևողություն	Բյուջեն 2011թ.
1.	09-CB1	Կարողությունների զարգացում				
2.	09-CB1/2	Արմավիրի մարզում թմրամիջոցների տարածման կանխարգելում	Հայաստանյան Կլոր սեղան	Արմավիրի մարզ	2010 դեկտեմբեր – 2011 մարտ	2,123,985
3.	11-CB1	Արդյունավետ ծրագիր մշակելու դասընթաց	Հայաստանյան Կլոր սեղան	Երևան	2011 հունվար – 2012 հուլիս	
4.	11-CB2	Հայ եկեղեցին ընդդեմ գեղեցիկ բռնությունների	Հայաստանյան Կլոր սեղան	ՀՀ մարզեր	2011 փետրվար – 2011 մայիս	8,030,000
5.	11-CB2/1	Աջակցություն ընտանիքներին	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին	ՀՀ մարզեր	2011 մարտ – 2011 մայիս	
6.	11-CB3	Կարողությունների զարգացում	Հայաստանյան Կլոր սեղան	ՀՀ մարզեր	2011 հունվար – 2011 դեկտեմբեր	3,851,642
7.	11-CB4	ՀԿՍ կարողությունների զարգացում	Հայաստանյան Կլոր սեղան	Երևան և Արմավիրի մարզ	2011 հունվար – 2011 դեկտեմբեր	9,829,310

2011 թ-ին այս ուղղությամբ իրականացվել է 7 ծրագիր, որոնցից ստորև ներկայացվում է չորսը

ՀԿՍ-ը ձգտում է բարելավել տարբեր ոլորտներում աշխատող իր գործընկեր կազմակերպությունների կարողությունները: Իրականացրած ծրագրերը տրամադրում են տեղեկություններ և գիտելիքներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ընտանեկան բռնությունը, գեղեցիկ բռնությունը, պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, թմրանյութերի օգտագործման նվազեցումը, հասարակական մոնիտորինգը, կապերի հաստատումը, շահերի պաշտպանությունը և այլն: Այդ նպատակին ՀԿՍ-ը հասնում է կանոնավոր դասընթացների (լսարանում և աշխատանքի վայրում), փորձի փոխանակման այցերի և խորհրդատվության, տեղերում հասարակության նախաձեռնությունների խրախուսման և շահերի պաշտպանության միջոցով:

Հասարակական մոնիտորինգի ոլորտում կարողությունների զարգացման լավ օրինակ է **Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի ՔՀԿ-ների ներգրավվածության ամրապնդումը ԵՀՔ և ԱԳ քաղաքականության իրականացման գործընթացում** ծրագիրը, որի նպատակն է բարելավել Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ՔՀԿ-ների ներգրավվածությունը ԵՀՔ և ԱԳ քաղաքականության իրականացման մոնիտորինգի գործընթացում:

Ծրագրի արդյունքում Հայաստանում կազմակերպվել են 2 սեմինարներ վերապատրաստողների համար, որոնք վարում էին առաջատար մասնագետներ Մեծ Բրիտանիայի INTRAC և Նիդերլանդների MDF կազմակերպություններից: Սեմինարների նպատակն էր ամրապնդել Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ընտրված ՔՀԿ-ների ներկայացուցիչների կարողությունները և գիտելիքները ԵՀՔ իրականացման արդյունքների և ազդեցության մոնիտորինգ իրականացնելու գործում և հնարավորություն տալ նրանց նախապատրաստել տեղական ՀԿ-ներին, որոնք կանցկացնեն իրենց համապատասխան երկրների Գործողությունների Պլանների իրականացման մոնիտորինգ:

Սեմինարների մասնակիցները Լեհաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Վրաստանի և Հայաստանի ծրագրերի մոնիտորինգ անցկացնելու ոլորտում աշխատող ՀԿ-ներից և հավատքահեն կազմակերպություններից էին: Սեմինարներին մասնակցեցին ընդհանուր թվով 14 ներկայացուցիչներ 12 կազմակերպություններից, որոնք

ընտրվել էին մասնակից երկրներից հավասարության հիմունքներով, և, որոնք հետաքրքրված էին երկրում ԵՀՔ-ի իրականացման հետագա գնահատման և մոնիտորինգի հարցերով: Սեմինարների նպատակներից մեկը ԵՀՔ-ի իրականացման ներկայացումն էր, ինչպես նաև ԵՀՔ-ին առնչվող համացանցային կայքերում հասարակական խորհրդատվության նպատակով տեղադրված նշված երկրների ԵՀՔ-ի իրականացման գործողությունների ծրագրի մոնիտորինգի պլանի և գործիքների ներկայացումը: Սեմինարների ընթացքում կազմվել է գործողությունների պլանի նախագիծ: Ակնկալվում է, որ սեմինարների մասնակիցները իրենց երկրներում ՔՀԿ-ների համար կկազմակերպեն ուսումնական դասընթացներ ԵՀՔ-ի իրականացման մոնիտորինգ թեմայով և կկազմավորեն ՔՀԿ-ների ներկայացուցիչներից բաղկացած խմբեր, որոնք կներգրավվեն ԵՀՔ-ի մոնիտորինգի գործընթացում: Սեմինարի ընթացքում մասնակիցները ստացան անհրաժեշտ գիտելիքներ կազմակերպելու քաղաքացիական հասարակության համակարգման գործընթացը միջազգային համագործակցության համաձայնագրերով որոշված ազգային ռազմավարության պլանավորման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներին մասնակցելու նպատակով:

Մասնակիցները ստացան իրենց առաջին գործնական փորձը ԵՄ ծրագրերի մոնիտորինգի վերաբերյալ և իրենց երկրներում ՔՀԿ-ների հետ արդեն սովորած մոտեցումների տարածման հնարավորություն: Նրանք մշակեցին նաև մոնիտորինգի և քաղաքացիական հասարակությանը և իրենց կառավարություններին ԵՀՔ-ի և ԱԳ-ի գործընթացներում ընդգրկելու ընթացակարգեր:

Մասնակիցները նաև հնարավորություն ստացան ստանձնելու առաջատար դեր իրենց երկրներում ՔՀԿ-ների ավելի լայն խմբերում մոնիտորինգին առնչվող տեղեկատվության տարածման, նրանց միջև համագործակցության խթանման, ԵՄ զարգացման աջակցման ծրագրերի իրականացման ընթացքում նրանց երկխոսության և որոշումներ կայացնելու գործընթացներում ներգրավելու հարցում:

Մեկ այլ կարևոր ոլորտ, որտեղ ՀԿՍ-ը ունի նշանակալի ներդրում, գեղեցիկ բռնության դեմ պայքարն է: **Հայաստանի եկեղեցիներն ընդդեմ գեղեցիկ բռնության** ծրագրի նպատակն է նպաստել Հայաստանի քահանաների

ներգրավվածությանը գենդերային բռնությունների դեմ պայքարում և լուծել գենդերային անհավասարության և խտրականության հիմնապատճառները՝ իրազեկության բարձրացման և գենդերային բռնությունների դեմ պայքարելու նպատակով դպրոցականների, կանանց, տղամարդկանց և երիտասարդների շրջանում գենդերային խնդիրների, իրավունքների և հավասարության գիտելիքների բարելավման, ազգային և տեղական մակարդակներում կանանց իրավունքների պաշտպանության և կարողությունների ամրապնդման, ինչպես նաև եկեղեցիներին գենդերային բռնությունների դեմ պայքարում ներգրավելու միջոցով:

Ծրագիրը մեկնարկել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և ՀՀ Կրթության և գիտության նախարար պարոն Արմեն Աշոտյանի հատուկ հրամանով:

Ծրագրի թիրախում են Հայաստանի 10 մարզերի 55 դպրոցների 4177 ծնողներ և երեխաներ: Գենդերային բռնությունների դեմ պայքարի վերապատրաստողների դասընթացներ են անցկացվել 25 հոգևորականների և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի 33 շրջանային համակարգողների համար:

Ծրագրի գործունեությունը լավ արձագանք ստացավ կրթական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների կողմից: Սեմինարների մասնակիցների կազմում էին թիրախային միջնակարգ դպրոցների աշակերտները, ծնողները և ուսուցիչները և, ըստ ուսումնասիրությունների, հետաքրքրության կենտրոնում էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են անուսնալուծության հիմնական պատճառները, Եկեղեցի-ընտանիք հարաբերությունները, հայկական ընտանիքներում Քրիստոնեական արժեքները, սիրո արժեքը և այլ պահպանելու ուղիները: Քահանաները բերում էին օրհնակներ իրենց հովվական փորձից՝ ծխերի անդամների առջև ծագած խնդիրների և դրանց լուծման ուղիների վերաբերյալ: Սեմինարները ինտերակտիվ էին, հարց-պատասխան բաժիններով և քննարկումներով: Ակնհայտ էր, որ սեմինարի մասնակիցները մեծապես կարիք ունեին հանդիպելու քահանաներին և լուծելու իրենց առջև ծառայած ընտանեկան խնդիրները, որոնց քննարկումը քահանաների հետ համարում էին անհնար նախքան Ծրագրի մեկնարկը:

Ծրագիրը կարևոր էր նաև Հայ Առաքելական Եկեղեցու ընդգրկվածությունը գենդերային բռնությունների դեմ պայքարում ներկայացնելու տեսանկյունից, քանի որ սեմինարների մասնակիցները սկսեցին շփվել քահանաների հետ՝ խնդրելով անհատական հովվական աջակցություն և խորհրդատվություն գենդերային բռնությունների և ընտանիքի ներսում այլ խնդիրների առնչությամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համագործակցությունը բավականին արդյունավետ էր քահանաների և թիրախային դպրոցների աշխատանքների համակարգման տեսանկյունից, հաշվի

առնելով այն, որ բոլոր մարզերում դպրոցների և քահանաների աշխատանքներում կիրառվել էր մեկ մեթոդաբանություն:

Ծրագրի ավարտին քահանաների համար կազմակերպված սեմինարի ընթացքում, վերջիններս արտահայտեցին ծրագիրը դպրոցներում շարունակելու և սեմինարների մասնակիցներին տրամադրվող լրացուցիչ տեղեկատվական նյութեր մշակելու իրենց հետաքրքրվածությունը: Մասնակից քահանաները մշակեցին Ծրագրի հետագա գործողությունների աշխատանքային պլան:

«Քրիստոնեական ժամանակից ընտանիքն իբրև հասարակության հենք» թեմայով շուրջ 10000 ձեռնարկներ են բաժանվել սեմինարների մասնակիցներին: Շողակաթ հեռուստաընկերությունը պատրաստել է վավերագրական ֆիլմ Հայաստանի տարբեր մարզերում Ծրագրի գործողությունների և Ծրագրի շահառուների արձագանքների մասին:

ՀԿՍ-ը ակտիվորեն համագործակցում է նաև մեկ այլ ուսումնական հաստատության՝ Գևորգյան Հոգևոր ձեմարանի հետ **Սոցիալական դիակոնիա առարկայի հիմունքների մշակման գործընթացում**: Ծրագրի հիմնական նպատակն է մշակել «Սոցիալական դիակոնիա և բիոթիկա» մագիստրոսական ծրագիր, որը հնարավորություն կտա Գևորգյան Հոգևոր ձեմարանի 120 ուսանողներին ուսումնասիրել քրիստոնեության սոցիալական ուսմունքի և բիոթիկայի հիմնասյուները, ներառյալ ՄԻԱՎ-ի, հղիության արհեստական ընդհատման, ընտանիքի պլանավորման և վերարտադրողական առողջության, գենդերային հավասարության, գենդերային բռնության, մարդավաճառության և այլ խնդիրներ:

Ծրագիրը կապահովի տեղեկատվության, հմտությունների և փորձի փոխանակման հնարավորություններ հովվական աստվածաբանության, հովվական խնամքի և խորհրդատվության բնագավառներում, հնարավորություն տալով ուսանողներին օգնել կարիքավորներին արդեն իսկ Ծրագրի գործնական պարապմունքների ընթացքում:

Առարկան կուսուցանվի ձեմարանում 3 տարիների ընթացքում և կամրավողի ուսանողների կարողությունները և հմտությունները դիակոնիայի, բիոթիկայի և հովվական խորհրդատվության տեսական և գործնական տեսանկյուններից, անդրադառնալով այսօր մեր հասարակության առջև ծառայած հիմնական մարտահրավերներին, տարբեր խոցելի խմբերի կարիքներին, այլ եկեղեցիներում կիրառվող և գործածվող հովվական խորհրդատվության մեթոդներին և մոտեցումներին:

Ծրագիրը նաև հնարավորություն է ընձեռում ապագա քահանաներին և կրոնական առաջնորդներին գործելու իրենց եկեղեցական ծխերում ոչ միայն որպես քահանաներ, այլ նաև տրամադրելու հոգեբանական խորհրդատվություն, քանի որ առարկան անդրադառնում է տարբեր խոցելի խմբերի հոգեբանական կարիքներին առնչվող թեմաներին:



ՄայքրոտՖիթի դասընթաց համակարգչային կենտրոնների ուսուցիչների համար

Առաջարկվող ծրագիրը եզակի է և, հաշվի առնելով Արևելյան Եվրոպայի տարածաշրջանում ծրագրի եզակիությունը, ձեմարանի դասախոսական կազմի բարձր պրոֆեսիոնալիզմը, մշակված ուսումնական պլանը, հետագայում առարկան կարող է դառնալ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում կրկնօրինակման համար լավ մոդել, ինչը կբնակարկվի 2012 թ-ի նոյեմբերին Գևորգյան Հոգևոր ձեմարանում կազմակերպվելիք տարածաշրջանային կոնֆերանսի ընթացքում, որին կմասնակցեն Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի հավատարհեն կազմակերպությունների առաջնորդներ, ինչպես նաև հրավիրված խոսնակներ և գիտական համայնքի ներկայացուցիչներ ՄԹ-ից (Օքսֆորդ) և Շվեյցարիայից (Եկեղեցիների համատեղ գործողություն այլապես):

Կարողությունների զարգացումը՝ լինելով առանձին բաղադրիչ այնուամենայնիվ սերտորեն կապված է ՀԿՍ-ի ռազմավարության այլ բաղադրիչների հետ: Այսպես օրինակ, «Համակարգչային գրագիտություն բոլորի համար» ծրագիրը ներառում է զարգացման տարբեր ուղղություններ և լուծում է հետևյալ խնդիրները՝

1. Կրթություն - համակարգչային գրագիտության դասավանդում և դասընթացների որակի բարելավում կենտրոններում
2. սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում - համակարգչային գրագիտությունը որպես կարևոր գործիք աշխատանքային կարիերայի և կրթության ասպարեզում
3. քաղաքացիական հասարակության զարգացում - ՏՏ-ների ընձեռած հնարավորությունների կիրառմամբ հաղորդակցման տեղեկատվության, փոխանակման ծրագրերի իրականացում
4. համակարգչային կենտրոնների կայուն զարգացում - ապահովելով վերջիններիս ադմինիստրատիվ և ծրագրային աշխատանքների արդյունավետ իրականացումը:

Ծրագրի շրջանակներում ընդգրկված են զարգացման ոլորտի գործընկերները, հատկապես նրանք, որոնք աշխատում են գիտա-կրթական ոլորտում: Կարողությունների զարգացման ռազմավարության հատուկ նշանակետը կրթությունն ու վերապատրաստումն է:

ՀԿՍ-ը 2011 և 2012թթ. իրականացրել է մի շարք կլոր սեղան հանդիպումներ և վերապատրաստման դասընթացներ համակարգչային կենտրոնների դասընթացավարների համար:

Նպատակ ունենալով զարգացնել համակարգչային դասընթացների որակն ու քանակը ՀԿՍ-ը մշտապես ապահովում է դասընթացավարների կարողությունների զարգացումը՝ ներգրավելով նրանց մասնագիտական և խորացված դասընթացներում, նպաստում է բարելավելու դասավանդման մեթոդները ինտերակտիվ և տեսողական նյութերով, վերագիտում տեխնոլոգիան, օգնում է կենտրոններում եկամտաբեր նախաձեռնությունների, ինչպես նաև հասարակական կապերի խթանմանն ու իրականացմանը:



Մայքրոսոֆթի դասընթաց համակարգչային կենտրոնների ուսուցիչների համար

1. **Վերապատրաստման դասընթացներ** 2011թ-ի դեկտեմբերին և 2012թ-ի հունիսին ՀԿՍ-ը Մայքրոսոֆթ-Հայաստանի հետ համատեղ իրականացրել է 2 վերապատրաստման դասընթացներ ընդգրկելով համակարգչային կենտրոնների 11 դասընթացավարների յուրաքանչյուր դասընթացում: Դասընթացների նպատակն է համակարգչային կենտրոնների աշխատակազմի համակարգչային հմտությունների և գիտելիքների բարելավումը որպես կարևոր նախապայման նրանց կարողությունների և պրոֆեսիոնալիզմի զարգացման և համակարգչային կենտրոններում որակյալ և արդյունավետ ուսուցման:

Վերապատրաստման դասընթացները ներառում էին MS Windows 7, MS Office փաթեթի Word, Excel, PowerPoint, Access ծրագրերը և «Visual Basic for Application» ծրագիրը: Դասընթացները անցկացվեցին Microsoft-ի ինովացիոն կենտրոնում՝ Հայաստանի Պետական ճարտարագիտական համալսարանում: Դասընթացներն իրականացվեցին դասախոս, Մայքրոսոֆթի ինֆորմացիոն տեխնոլոգիաների ակադեմիայի տնօրեն Արթուր Զապրոսյանի կողմից: Դասընթացների ավարտին կատարվեց մասնակիցների գիտելիքների գնահատում և վկայականների հանձնում:

2. **Հանդիպումներ, խորհրդատվություն և փոխանակումներ.** ՀԿՍ-ը դասընթացավարների կարողությունների զարգացման գործընթացում կարևորում է ոչ միայն արհեստավարժության դասերը, այլև կազմակերպում է հանդիպումներ, ստեղծում փորձի փոխանակման հնարավորություններ նրանց համար: Օգտվելով

ընձեռված հնարավորությունից հանդիպումների ընթացքում մասնակիցները կիսում են կենտրոններում կատարած աշխատանքի իրենց փորձառությունը, ներկայացնում իրենց մոտեցումներն ու դասավանդման մեթոդիկան, քննարկում գոյություն ունեցող խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր տարբերակները, հաղորդակցումն ու համագործակցությունը տեղական գործընկերների և համայնքների հետ ի նպաստ իրենց կարողությունների բարելավման:

Գյումրիի սոցիալական կենտրոնի համակարգչային կենտրոնը ներկայացրեց իր դրական փորձը. այն գործում է Շիրակի թեմի հովանու ներքո, և առաջինն է համակարգչային կենտրոնների մեջ և հաջողվածը: Հանդիպմանը կենտրոնի պատասխանատուն ներկայացրեց իրենց կենտրոնի ընդհանուր աշխատանքը, արդյունավետ համակարգումը և ղեկավարումը, գործողությունների ճիշտ պլանավորման և կազմակերպման անհրաժեշտությունը և հատկապես նշեց թեմի աջակցության և առաջնորդող դերի կարևորության մասին:

Վերջին հանդիպման ընթացքում, որն իրականացվեց Մայր Աթոս Սուրբ Էջմիածնում, համակարգչային կենտրոնների աշխատակիցները պարզապես զննեցին դասընթացների ավարտական վկայականներով և ներկայացրեցին կենտրոնների ամենաթարմ զարգացումները: Վերջում իրականացվեց նոր համակարգիչների բաշխում:

Բացի սոցիալ-տնտեսական և բնապահպանական խնդիրներ լուծելը, ՀԿՍ-ը փորձում է աջակցել իր գործընկերներին զարգացնելու աղետներին դիմակայելու և արդյունավետ արձագանքելու կարողությունները արտակարգ իրավիճակների ոլորտում, հաշվի առնելով բնական և մարդածին աղետների աննախադեպ աճը երկրում և կոնֆլիկտները: Որպես ACT Alliance-ի անդամ ՀԿՍ-ը աշխատում է նվազեցնել հնարավոր աղետների ռիսկերը, պայքարել և ավելի լավ նախապատրաստվել աղետներին:

Որպես Էկումենիկ կազմակերպություն ՀԿՍ-ը և իր գործընկերները միասին ծրագրեր են իրականացնում հիմնվելով ՀԿՍ-ի ծրագրերի, ռազմավարության վրա, մասնավորապես համայնքներին հոգևոր աջակցություն ցուցաբերելիս: ՀԿՍ-ը օգնում է իր գործընկերներին լուծելու սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները համայնքներում: Այս առումով աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարությունը ծառայում է որպես համայնքների հզորացման միջոց և նպաստում բնակչության ֆիզիկական և հոգևոր պաշտպանությանը:

1997թ.-ից ՀԿՍ-ը Հայաստանի բոլոր մարզերում իրականացրել է մի քանի մարդասիրական ծրագրեր արտակարգ իրավիճակների ոլորտում, հիմնականում երաշտի, սողանքների դեպքում: Մի քանի ՀԿ-ներ և եկեղեցական կազմակերպություններ, ինչպես նաև Հայաստանի թեմերը ակտիվորեն մասնակցել են ծրագրերին՝ աջակցելով տեղական համայնքներին սնունդի, սերմացուի բաշխման և այլ գործընթացներում:

ՀԿՍ-ը և իր գործընկերները արդեն որոշակի փորձ ունեն մարդասիրական օգնությունների բաշխման գործում, բայց ավելի շատ ջանքեր են պահանջվում աղետներին կանոնավոր կերպով դիմակայելու համար:

Այդ նպատակով ՀԿՍ-ը որպես ռազմավարություն որդեգրել է աղետներին նախապատրաստվածության և արձագանքման ոլորտը:

Այս ռազմավարությունը նաև արդյունք է «Կազմակերպական կարողությունների գնահատումների», որոնք իրականացվեցին 2009-2010թթ-ին և ներառվեցին կարողությունների զարգացման եռամյա ծրագրում: Ի հավելումն՝ ստեղծվեց գործընկերների ցանց, որոնք վերապատրաստումների արդյունքում զինվեցին աղետների վերաբերյալ ընդհանուր գիտելիքներով՝ աղետների բնութագիրը, ազդեցությունը, դրա նվազեցումը և այլն:

ՀԿՍ-ը համարում է, որ շատ կարևոր է շարունակել ցանցի անդամների կարողությունների զարգացումը: Այդ նպատակով, ՀԿՍ-ը նախապատրաստում է երկու վերապատրաստման դասընթացներ գործընկերների համար 2012թ-ին: Առաջինն ուղղված է աղետներին նախապատրաստվածություն և արձագանքում թեմային ՀԿՍ-ի աշխատակիցների, գործընկերների և ACT Alliance-ի հայաստանյան ֆորումի անդամների կարողությունների զարգացմանը՝ նպատակ ունենալով նպաստել մասնակիցների պատրաստվածությանը աղետներին համակարգված և արդյունավետ դիմակայման և արձագանքման գործողություններում: Երկրորդն ուղղված է համայնքահեն սոցիալ-հոգեբանական աջակցության ընդլայնմանն ու կիրառմանը տեղական և ազգային մակարդակներում:



ԵՐԿԻՍՈՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՏԵՑՄԱՆ

actalliance



ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՉԱՆԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՇՏԵՑՄԱՆ

N	Ծրագրի համար	Ծրագրի անվանում	Իրականացնող կազմակերպություն	Իրականացման վայր	Տևողություն	Բյուջեն 2011թ.
1.	09-PB1	Երկխոսության խթանում հանուն տարածաշրջանային խաղաղության և հաշտեցման	Հայաստանյան Կլոր սեղան	ՀՀ, Ադրբեջան	2009 ապրիլ –2011 հոկտեմբեր	34,148,356
2.	11-PB1	Երկխոսության խթանում հանուն տարածաշրջանային խաղաղության և հաշտեցման	Հայաստանյան Կլոր սեղան	ՀՀ, Ադրբեջան	2011 նոյեմբեր –2014 հոկտեմբեր	3,203,400



Խաղաղության երիտասարդ ակտիվիստները երկկողմանի հանդիպումների ու միացյալ դասընթացների ժամանակ



Խաղաղության երիտասարդ ակտիվիստները երկկողմանի հանդիպումների ու միացյալ դասընթացների ժամանակ

Հայաստանն ու Ադրբեջանը 1988 թ-ին սկսեցին պայքարել հայաբնակ Լեռնային Ղարաբաղի համար, որը Խորհրդային Ադրբեջանին է կցվել 1920 թ. Մոսկվայի կողմից: Պայքարը վերաժվեց իսկական հակամարտության այն ժամանակ, երբ երկու երկրները 1991 թ-ին անկախացան Սովետական Միության փլուզումից հետո: 1994 թ-ին հակամարտությունը սառեցվեց, իսկ հրադադարը շարունակվում է մինչև օրս: 1994 թ-ից ի վեր Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության հովանու ներքո գործող և Ֆրանսիայի, Ռուսաստանի ու ԱՄՆ-ի կողմից համանախագահվող Մինսկի խումբը համակարգում է հայ-ադրբեջանական բանակցությունների գործընթացը: Երկու երկրներն էլ որպես իրենց քաղաքական բանակցությունների հենակետ օգտագործում են Մինսկի խմբի 2007 թ-ի մադրիդյան առաջարկները: Կողմերի միջև շարունակվող անհամաձայնության աղբյուր են մադրիդյան սկզբունքների այն կետերը, որոնք վերաբերում են Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին և ինքնորոշման իրավունքին, ԼՂՀ տարածքային ամբողջականությանն ու նրա շրջակա տարածքներն Ադրբեջանին վերադարձնելուն, որոնք էլ հակամարտության արմատն են հանդիսանում:

Քանի դեռ քաղաքական իրավիճակը չի կարգավորվել, երկու երկրների ժողովուրդը տառապում է պատերազմի սարսափելի հետևանքների պատճառով: Թեև հակամարտությունը սառեցվել է բարձր քաղաքական և դիվանագիտական մակարդակներով, գոյություն ունի պատերազմը վերսկսելու ռիսկ: Հաճախակի են տեղի ունենում զինադադարի խախտումներ, մարդիկ շարունակում են սպանվել սահմանագծում, երկու երկրներում ռազմական ծախսերն աճում են, պատերազմի գաղափարախոսությունը ավելի ու ավելի է ծավալվում, կարծրատիպերն ամրանում են:

Տարածաշրջանային խաղաղությանը հանրային մակարդակով նպաստելու համար, որպես քաղաքական նախաձեռնության խումբ՝ հետերևյուս Ադրբեջան ՀԿ-ն Ադրբեջանից և Նոդալկաթե հեռուստաընկերությունն ու Հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամը Հայաստանից, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Հայաստանում և Ադրբեջանում սկսեցին հանրային իրազեկման արշավ և անցկացրին մի շարք քննարկումներ խաղաղության և հաշտեցման վերաբերյալ: Հանրային քննարկումներում ընդգրկվեցին ուսանողներ, հասարակական կազմակերպություններ, լրագրողներ, երիտասարդներ և այլ շահագրգիռ խմբեր: Քննարկումները հիմնվում էին ծրագրի շրջանակներում նկարահանված վավերագրական ֆիլմերի դիտման ու ստացված տպավորությունների փոխանակման վրա: Քննարկումները պիտի նախապատրաստեին երկու ազգերին երկխոսության՝ խրախուսելով քաղաքացիներին ավելի բաց լինել դեպի հակամարտության լուծումը և խաղաղության վերականգնումը տանող թարմ գաղափարների հանդեպ, օգնեին կոտրել, ուրիշներին մասին ունեցած բացասական կարծրատիպերը և կատարել փոխադարձ վստահություն ձեռքբերելու համար առաջին քայլերը: Ծրագիրը, մյուս կողմից, փորձում էր կենտրոնանալ այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են արդարությունը, խաղաղությունը, սերը, միասնությունն ու արժանապատիվ կյանքը, որոնք՝ չնայած կրոնական տարբերություններին, հավասարապես կիսում են հայերն ու ադրբեջանցիները:

Ծրագիրը ֆինանսավորող գործընկերներն են եկեղեցական կազմակերպությունները և գործակալությունները Շվեյցարիայից (HEKS-EPER), Նորվեգիայից և Նիդերլանդներից, որոնց նպատակն է հանրային մակարդակով նպաստել Հայաստանում և Ադրբեջանում հաշտեցման գործընթացին:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՏԵՑՄԱՆ



Խաղաղության երիտասարդ ակտիվիստները երկկողմանի հանդիպումների ու միացյալ դասընթացների ժամանակ



Խաղաղության երիտասարդ ակտիվիստները երկկողմանի հանդիպումների ու միացյալ դասընթացների ժամանակ

Ծրագրի այս փուլը իր ավարտին մոտեցավ 2011 թ-ի նոյեմբերին և, հիմնվելով այն առաջարկների վրա, որ հնչեցրել է 2010 թ-ին Շվեյցարական Խաղաղություն (Swiss Peace) կազմակերպությունը ծրագրի վերջնական գնահատման ժամանակ, նախաձեռնող խումբը 2011 թ-ի նոյեմբերից սկսեց ծրագրի նոր փուլ, որը կտևի մինչև 2014 թ-ի հոկտեմբերը:

Մինչև օրս ծրագրի շրջանակներում պատրաստվել է 6 վավերագրական ֆիլմ, անցկացվել է ավելի քան 100 հանրային քննարկում՝ մոտ 1700 մարդկանց մասնակցությամբ երկու կողմերից, ստեղծվել է երիտասարդ ակտիվիստների խումբ, անցկացվել է երկու երկրների ակտիվիստների երեք երկկողմանի հանդիպում երրորդ երկրում, և ակտիվիստները համատեղ մշակել ու իրականացրել են մեկ փոքրածավալ նախագիծ:

Ծրագրի նոր եռամյա փուլը նույնպես նպատակ է հետապնդում երկու երկրների մարդկանց ապահովել այլընտրանքային հեռանկարով և մյուս կողմի մասին դրական տեղեկատվությամբ, ամրապնդել երիտասարդների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունն ու դերը որպես խաղաղության կառուցման ու վստահության ձեռքբերման գործընթացում դրական դերակատարների, ինչպես նաև նպաստել ազգային և միջազգային որոշումների կայացման մակարդակով (օրինակ՝ Ազգային ժողով, Արտաքին գործերի նախարարության, ՄԱԿ, ԵՀ, ԵՄ) իրազեկության բարձրացմանը: Այս փուլում ևս նախատեսվում է շարունակել հանրային քննարկումները երկու երկրներում՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով երիտասարդական աշխատանքների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ ռազմավարական համագործակցություն կառուցելու վրա, պատրաստել մեկ վավերագրական ֆիլմ և քարոզչություն ծավալել ազգային և միջազգային մակարդակներով:

Նախաձեռնող խումբը հավատացած է, որ ուղղակի միջհամայնքային երկխոսությունը և խնդրի առավել լայն լուսաբանումը ներդրում կունենան խաղաղության համար պայմանների ստեղծման և հայերի ու ադրբեջանցիների միջև հարաբերությունների կարգավորման համար, և դրանով իսկ տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատման գործընթացում: Սակայն խումբը, այնուամենայնիվ, հասկանում է, որ նման ծրագրի իրականացումը խիստ փոխկապակցված է քաղաքական բանակցությունների և երկրի իրողությունների հետ:



"ՍՕՍ-ԱՌԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

Անկախ աուդիտորական եզրակացություն № 05

«Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Միջեկեղեցական Բարեգործական Կլոր Սեղան» հիմնադրամի 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «ԵՀԽ Հայաստանյան Միջեկեղեցական Բարեգործական Կլոր Սեղան» հիմնադրամի ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Միջեկեղեցական Բարեգործական Կլոր Սեղան» հիմնադրամի (այսուհետև՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

ԲԳ: Երևան 0037, Ա. Տիգրանյան 38; Բեռ./ֆաքս՝ (374 10) 20 11 51; Էլ-փոստ՝ sosaudit@web.am, sosaudit@yandex.ru «Յու.Նի.բանկ» ՓԲԸ; Խ/Կ 241061006276

38 A. Tigranyan, Yerevan 0037; RA; Tel./fax: (374 10) 20 11 51; E-mail: sosaudit@web.am, sosaudit@yandex.ru "Unibank" CJSC; CA 241061006276